## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**«ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգով էլեկտրոնային ձևով Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Աբովյան

09/03/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառացյանը (ԳՊ/ԲԱ),
Ա. Չոբանյանը (ԳՊ/ԳԱ), Վ. Օհանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Չոհրաբյանը (ԳՊ/ՄՀՄ)

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

**1. «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացման մասին**

**Մ. Գուլոյան**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2017 թվականի մարտի 9-ին, ժամը 10:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին**

**Մ. Գուլոյան**

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 64 079 870 (վաթսունչորս միլիոն յոթանասունինը հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Անվանումը** | **Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը** | **Տ/Փ-ի սպացականի հ/հ** | **Հասցեն** |
| 1 | «Վահրադյան Շին» ՍՊԸ | vahradyanshin@yandex.ru (099) 01-61-00 | 000037459 | Ք. Երևան, Աշտարակի խճուղի, 47/6 շենք |
| 2 | «Լևոն և Աննա» ՍՊԸ | roseabajian@yahoo.com (098)000053 | 000037448 | ք. Երևան, Ջրվեժ 89/1 |
| 3 | «Բալահովիտ-1» ՍՊԸ | balahovit-1@yandex.ru, (099)491-791 | 000037415 | ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ |
| 4 | «Մեհեկան» ՍՊԸ | general@asatryans.com, (0222) 2 01 25 | 000037413 | ք. Աբովյան, Կոտայքի փող., 2 շենք |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**
**Մ. Գուլյան**

ՀՀ դրամ

| Մասնակցի անվանումը | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկ-ված գինը (առանց ԱԱՀ)* | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| «Վահրադյան Շին» ՍՊԸ | 39 200 000 | 4 312 000 | 43 512 000 | 8 702 400 | 52 214 400 (հիսուներկու միլիոն երկու հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) |
| «Լևոն և Աննա» ՍՊԸ | 38 763 400 | 3 876 340 | 42 639 740 | 8 527 948 | 51 167 688 (հիսունմեկ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր ութսունութ) |
| «Բալահովիտ-1» ՍՊԸ | 41 288 133 | 4 541 695 | 45 829 828 | 9 165 966 | 54 995 794 (հիսունչորս միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր իննսունչորս հազար) |
| «Մեհեկան» ՍՊԸ | 32 280 230 | 3 550 825 | 35 831 055 | 7 166 211 | 42 997 266 (քառասուն-երկու միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր վաթսունվեց) |

*Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**
**Մ. Գուլոյան**

4.1 «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Բալահովիտ-1» ՍՊԸ-ի և «Մեհեկան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

4.2 «Լևոն և Աննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

4.3 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Լևոն և Աննա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև 2017 թվականի մարտի 10-ը, ժամը 10:00-ն շտկել արձանագրված անհամապատասխանությունը հրավերով սահմանված ձևով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գուլոյան

անդամներ՝ Գ. Խաչատրյան

Ա. Չոբանյան

Լ. Շառաջյան

Վ. Օհանյան

Քարտուղար՝ Տ. Զոհրաբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**«ԱԲՀ-ԲԸԱԾՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգով էլեկտրոնային ձևով Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Աբովյան

10/03/2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաչյանը (ԳՊ/ԲԱ), Ա. Չոբանյանը (ԳՊ/ԳԱ), Վ. Օհանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Տ. Ջոհրաբյանը (ԳՊ/ՄՀմ)

## 1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի) անհամապատասխանությունների շտկման մասին

__Մ. Գուլոյան__

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Լևոն և Աննա» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով տեղեկացվել է հայտի N 3.1 հավելվածում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ և սահմանված ժամկետում շտկել է այն:

## 2. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին

__Մ. Գուլոյան__

2.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

Գնահատել բավարար «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Լևոն և Աննա» ՍՊԸ-ի, «Բալահովիտ-1» ՍՊԸ-ի և «Մեհեկան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը: Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից ճանաչել հետևյալ մասնակիցներին.

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ)* | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| Չափաբաժին N1 Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերում | | | | | | |
| 1 | «Մեհեկան» ՍՊԸ | 32 280 230 | 3 550 825 | 35 831 055 | 7 166 211 | 42 997 266 (քառասուն-երկու միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր վաթսունվեց) |
| 2 | «Լևոն և Աննա» ՍՊԸ | 38 763 400 | 3 876 340 | 42 639 740 | 8 527 948 | 51 167 688 (հիսունմեկ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր ութսունութ) |
| 3 | «Վահրադյան Շին» ՍՊԸ | 39 200 000 | 4 312 000 | 43 512 000 | 8 702 400 | 52 214 400 (հիսուներկու միլիոն երկու հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) |
| 4 | «Բալահովիտ-1» ՍՊԸ | 41 288 133 | 4 541 695 | 45 829 828 | 9 165 966 | 54 995 794 (հիսունչորս միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր իննսունչորս հազար) |

**6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**

**Մ. Գուլոյան**

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

6.2 Հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակել www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

6.3 Հրավերի 7.7 կետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

6.4 Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Գոլոյան

անդամներ՝ Գ. Խաչատրյան

Ա. Չոբանյան

Լ. Շառաչյան

Վ. Օհանյան

Քարտուղար՝ Տ. Զոհրաբյան